**Մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Բջնիի Հովի. Թումանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ռուսաց լեզվի (3 դասաժամ), մայրենիի (6 դասաժամ), մաթեմատիկայի (դասվար՝ 5 դասաժամ), կերպարվեստի (2 դասաժամ), ես և շրջակա աշխարհի (2 դասաժամ), ֆիզկուլտուրայի (15 դասաժամ) ուսուցիչների թափուր տեղերի համար**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ) (միջին մասնագիտական կրթություն ունեցող և կամավոր ատեստավորում անցած ուսուցչի կողմից թափուր տեղի մրցույթին մասնակցելու դեպքում՝ միջին մասնագիտական կրթության փաստաթուղթ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024թ–ի սեպտեմբերի 20-ից մինչև 2024թ–ի հոկտեմբերի 3–ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00--15:00 ընկած ժամանակահատվածում, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2024 թ–ի հոկտեմբերի 8-ին՝ ժամը 14:00-ին**, Բջնիի Հովի. Թումանյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցե՛գ. Բջնի, 12-րդ փողոց, շենք 5: Տեղեկությունների համար զանգահարել (096)079770 կամ (098)059770 հեռախոսահամարներով: